

**ՀՀ Ֆինանսների նախարարություն**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/3**

**15 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Կարեն Եսայանի գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.06.2014 թ-ի թիվ 260589 որոշման դեմ:

**Քաղաքացի Կարեն Եսայանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ԿԱ Օպերատիվ-հետախուզության վարչությանը (այսուհետ նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ) թիվ 1004495 հաձնարարագրի հիման վրա հանձնարարվել է «ՍԱՏՈՒՐՆ ՄԻԿԿԱ» ՓԲԸ-ում իրականացնել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով 15.05.2014 թ-ին կազմվել է թիվ 1004495 ակտը, որով «ՍԱՏՈՒՐՆ ՄԻԿԿԱ» ՓԲԸ-ի նկատմամբ առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն շրջանառության հարկի գծով 65.649 դրամ և եկամտային հարկի գծով 750.000 դրամ:

Կոտայքի ՏՀՏ-ի (այսուհետ նաև վարչական մարմին) կողմից 30.06.2014 թ-ի թիվ 260589 որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ և 169.5-րդ հոդվածների խախտման հիմքով Բողոքաբերի նկատմամբ նշանակվել է վարչական տուգանք 250.000 դրամի չափով: Վարչական իրավախախտման հիմք է ծառայել Կոտայքի ՏՀՏ 26.06.2014 թ-ի թիվ 807 արձանագրությունը և վերը հիշատակված թիվ 1004495 ակտը:

Բողոքի իրավական հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վարչական մարմինը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները՝ Վարչական մարմինը չի իրականացրել գործում եղած փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, ինչի արդյունքում կայացվել է ոչ իրավաչափ վարչական ակտ:

Այսպես, Կոտայքի ՏՀՏ-ն 30.06.2014 թ-ի թիվ 260589 որոշումը կայացրել է 15.05.2014 թ-ի թիվ 1004495 ակտի հիման վրա, իսկ դեռևս 10.06.2014 թ-ին «ՍԱՏՈՒՐՆ ՄԻԿԿԱ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել վիճարկման հայց (որի մասին քաջատեղյակ է նաև վարչական մարմինը), որով խնդրել է դատարանից ամբողջությամբ վերացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.05.2014 թ-ի թիվ 1004495 ակտը:

ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վիճարկման հայցը վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը (...):»:

Կասեցումն ինքնին նախատեսում է վարչական ակտի կամ վարչական վարույթի գործողության ժամանակավոր ընդհատում դրա վերաբերյալ քննության կամ դրա հետ փոխկապակցված և առաջինի ելքի վրա անմիջական ազդեցություն ունեցող մեկ այլ վարչական վարույթի ավարտը: Այսինքն, վարչական ակտի գործողության կասեցումը

քննության ընթացքում ըստ էության սահմանափակում է դրա իրավական ուժն ու պարտադիր գործողությունը դրանում նշված սուբյեկտի նկատմամբ, որի ընթացքի վերջում բացառված չէ նաև դրա վերացումը:

Այս պարագայում ՀՀ Վարչական դատարանը 12.06.2014 թ-ին վերը հիշատակված վիճարկման հայցն ընդունելով վարույթ, որի հիման վրա էլ օրենքի ուժով կասեցվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.05.2014 թ-ի կայացված թիվ 1004495 ակտը: Հետևաբար, վարչական ակտի իրավաչափության հարցը կասկածի տակ դնելու դեպքում, ինչպես նաև դրա իրավական ուժը դադարեցված լինելու ժամանակահատվածում, իրավական ողջամտության սահմաններից դուրս է դրա հիման վրա վարչական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, որպիսի հիմքով էլ վարչական մարմինն ընդհանրապես չուներ որևէ իրավական հիմք այդ ակտի հիման վրա վարույթ հարուցելու և պատասխանատվության միջոց կիրառելու համար:

Վերոշարադրյալի հիմքով հաստատվում է վարչական մարմնի ուղղակի և անմիջական պարտավորությունն իրականացնելու վարչական վարույթի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն, ապահովելով անձի իրավունքների իրականացումը:

Գանգատաբերը գտնում է, որ Կոտայքի ՏՀՏ-ի պետի կողմից 30.06.2014 թ-ին կայացված թիվ 260589 որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման հետևանքով և ենթակա է անվավեր ճանաչման:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել Կոտայքի ՏՀՏ-ի պետի 30.06.2014 թ-ի թիվ 260589 որոշումը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.10.2013 թ-ի թիվ 1004495 հանձնարարագրի «ՍԱՏՈՒՐՆ ՄԻԿԿԱ» ՓԲԸ-ում իրականացնել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 15.05.2014 թ-ին կազմվել է թիվ 1004495 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Հիմք ընդունելով ստուգման ակտի 16-րդ կետով արձանագարված խախտումները, ինչպես նաև ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ և 169.5-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի կողմից 30.06.2014 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 260589 որոշումը, որով «ՍԱՏՈՒՐՆ ՄԻԿԿԱ» ՓԲԸ տնօրեն Կարեն Եսայանի նկատմամբ նշանակվել է վարչական տուգանք 250.000 դրամի չափով:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ մինչև ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.06.2014 թ-ի թիվ 260589 որոշման ընդունումը «ՍԱՏՈՒՐՆ ՄԻԿԿԱ» ՓԲԸ կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան, որով խնդրել է անբողջությամբ վերացնել ստուգման

ակտը: ՀՀ վարչական դատարանի որոշմամբ հայցադիմումը 12.06.2014 թ-ին ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալից հետևում է, որ «ՍԱՏՈՒՐՆ ՄԻԿԿԱ» ՓԲԸ կողմից ստուգման ակտի դեմ ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացվելու և այն 12.06.2014 թ-ին վարույթ ընդունվելու պայմաններում հարուցված վարչական վարույթը ենթակա էր կասեցման, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.06.2014 թ-ի թիվ 260589 որոշումը ենթակա է բեկանման, իսկ գործը՝ նոր քննության:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ Կոտայքի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.06.2014 թ-ի թիվ 260589 որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ